ԿՐՔՆԻ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐ
АРМЯНСКИЕ МАСТЕРА КИСТИ

ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

1928—1975

МИНАС АВЕТИСЯН

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆԴ
«ԷՐԵԲՈՒՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1989
АРМЯНСКИЙ ФОНД КУЛЬТУРЫ
ИЗДАТЕЛЬСТВО «ЭРЕБУНИ»

Մինասը մեր նկարչության բարձրացող աշտարակն էր. հեռուներից տեսանելի ու հեռուներ բացող:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ստեղծագործողներ կան, որոնց անունները արվեստի պատմությունը հիշում և հիշելու է առանձնահատուկ սիրով: Դրանք ի վերուստ արվեստին կոչված ու արվեստին նվիրաբերված անհատներ են: Ապրելով արարման կարճատև շրջան, նրանք զարմանալի կերպով հաստատում են իրենց ստեղծագործական «ես»-ը, թողնում անգնահատելի ժառանգություն: Այդ կարգի նկարիչ է Մինաս Ավետիսյանը:

Նա հրաժեշտ տվեց կյանքին քառասունյոթ տարեկան հասակում: Ավարտել է Երևանի գեղարվեստական ուսումնարանը, ապա 1960-ին Լենինգրադի գեղարվեստից ակադեմիան: Հետագա մեկուկես տասնամյակում նա ստեղծեց մոտ հինգ հարյուր փոքր ու մեծ կտավ, գրեթե այդքան էլ գծանկար, քսան մեծաչափ որմնանկար և ձևավորեց տասից ավելի թատերական ներկայացում: Նկարչի ողբերգական մահից երեք տարի առաջ հրդեհի զոհ դարձան արվեստանոցում գտնվող ամեն ինչ, այդ թվում հարյուրից ավելի ավարտված կտավ:

Մինասը ծնվել ու հասակ է առել Հայաստանի հյուսիսում, լեռնային Ջաշուռ գյուղում: Հողի հետ կապված մարդու առօրյան, գեղջկական պարզ կյանքի հնավանդ սովորությունները, արևի ու լույսի տակ մշտապես փոփոխվող շրջակա լեռների ու դաշտերի պայծառ գույները եղել են նրա ներշնչումների հիմնական ու անփոփոխ աղբյուրը: Ակադեմիայի շրջանավարտ Մինասը հայրենի արվեստում հայտնվեց մի քանի տասնյակ սքանչելի գործերով, արդեն իսկ սեփական դեմքը ունեցող նկարիչ:

Մինասի հայտնությունը առանձնապես ուրախացրեց նրա հոգևոր հորը, «հարազատ հողի արվեստ» ոգեկոչած ծերունազարդ Սարյանին: «Իմ իսկական հետնորդները կլինեն այնպիսի նկարիչներ, որոնց գործերը իրենց արտաքինով նման չեն լինի իմ աշխատանքներին»: Մեկնելով ոչ

թե Սարյանից, այլ այն ակունքից, որից սերել էր Սարյանը, Մինասը ազգային նկարչության մեջ գունային նոր խոսքի ու բովանդակության ավետիս արեց:

Ընկերասեր, բարեսիրտ, բացառիկ հմայքի տեր Մինասը, իր հզոր ու համարձակ տաղանդով մեր կերպարվեստի 1960-ական թթ. նոր վերելքի խորհրդանիշը դարձավ:

Մինասի տարերքը գույնն է, գույների տաք, սուր ընկալումը: «Իմ ծնողները» կտավում ծերունիների տխուր կեցվածքին ու դեմքերի արտահայտությանը ձայնակցում են խորհրդավոր լռությամբ համակված ամայի սարերը: Պատկերը, սակայն, զերծ է տրտմագին տրամադրությունից: Կապույտի, դեղինի, կարմիրի հնչեղ գունածավալները իրենց կենսառողջ ուժով միանգամից ներգործում են դիտողի վրա: Նկարիչը ընդհանրացրել է հողի մարդու կերպարը, շեշտել մարդու և բնության անխզելի կապը, հասել հավերժության գաղափարի դրսևորմանը:

Մինասը հաճախ է պատկերել մորը իրենց տան շեմին: Սովորելու տարիներին ամեն անգամ տուն գալիս ու կրկին բաժանվելիս, մայրը դռան առջև կանգնած երկար հետևել է որդու հեռանալուն: «Շեմին» նկարների սյուժեն ծնվել է կենդանի տպավորությունից, բայց ներկայի մեջ խտացած է հավիտենականը՝ գեղջուկ մոր դարավոր կերպարը: Նկարի հուզիչ սյուժեն ստիպում է մտածել ավելին՝ վերապրել և պատերազմի օրերը, վերհիշել հազարավոր որդեկորույս մայրերի: Այս թեման ամեն անգամ լուծելով կենսալի, երգող գույներով, նկարիչը վերածում է այն բանաստեղծական, խոր քնարական ասքի:

Այսպես են ընթերցվում նաև Մինասի գեղանկարչական գործերի զգալի մասը կազմող բնանկարները:

Նկարչի գրեթե բոլոր գործերը կարելի է միավորել «Մեր գյուղը» կամ ավելի ճիշտ «Իմ աշխարհը» խորագրի տակ: Մինասը ճանաչում ու անսահմանորեն սիրում է հարազատ միջավայրը և զարմանալի չէ, որ հազվադեպ է օգտվել նատուրայից: Լիովին վստահելով իր ներքին տեսողությանը նա իր առջև դնում է մեկ կարևոր խնդիր՝ հասնել գեղանկարչական կերպարայնության: Կտավների կոլորիտային բազմազանության ու ձևերի պլաստիկական արտահայտչականության մեջ կարելի է տեսնել հայրենի բնաշխարհը իր մեջ կրող նկարիչ-բանաստեղծին որին, ասես բնությունը ծնել է, որպեսզի նրա միջոցով տեսնի իրեն, հմայվի իրենով՝ Մինասով արարված իր նոր գեղեցկությամբ:

Առաջին գործերի համեմատությամբ, նկարչի վերջին կտավների դեղանկարային մակերեսները հարուստ են, հագեցած ու զգայաթոթռ: Այստեղ, իրենց ուրույն արտացոլումն են գտել արևի տակ խանձված ժայռե-

ի ու խաչքարերի մամռոտ, թավշացած, հավիտենության խորհուրդ կրող մակերեսները: Քաջ ճանաչելով իր երկիրը և հաճախ շրջագայելով դեպի հինավուրց հուշարձանները, Մինասը ներշնչվում էր նորովի, առավել իմաստնացած էր տեսնում իր կտավների գունային մակերեսները:

Եթե հայրենի աշխարհի հանդեպ Մինասի տածած սերը, իր ընդհանուր քնարական խորքով հնչում է իբրև հիմնական բովանդակություն, ապա նրա ստեղծագործության բուն արժեքը բացահայտվում է բացառիկ ինքնատիպությամբ: Մինասի ինքնատիպությունը որքան եզակի է, նույնքանով՝ ավանդական: Նրա արվեստի արմատները սկիզբ են առնում միջնադարյան մանրանկարչությունից ու ժողովրդական արվեստից:

Մինասի խիստ արդիական արվեստը հայկական գեղանկարչության զարգացմանը ամենից ավելի բնորոշ՝ մարդու և բնության անմիջական կապից ծնված, առողջ, կենսասիրական գծի արտահայտություններից է: Սարյանի մոտ, օրինակ, գույնը լուսակրող է, ենթակա արևի լույսին և նպատակամղված հավերժության գաղափարին: Մինասի մոտ գույնն ունի հուզական, կրքոտ, դրամատիկ, երբեմն մինչև ողբերգության հասնող հնչողություն: Այդ դրամատիզմը ենթագիտակցական է, բխում է ժամանակից, մեր օրերի մարդու տագնապներից, մտահոգություններից, իրականության ցավսիրտ ընկալումից:

Մինասի գեղանկարային լեզվի արդիականությունը (և դա ոչ միայն հայ արվեստում) արտահայտվում է գույնի հնչողական ուժի ու արժեքի նոր ըմբռնմամբ, կտավի վրա գերլարված մթնոլորտի ստեղծմամբ: Այնկոնման պահերին ծովն առավել խոր ու հզոր է ներշնչում. Այդպես են ներգործում և Մինասի կտավները, հուզառատ, իրենց երանգաշարով ու կենսահաստատ իրենց ներքին բովանդակությամբ ու ոգով:

Գեղանկարիչ Մինասը ոչ պակաս հաջողությամբ հանդես եկավ կերպարվեստի այլ բնագավառներում: Տեխնիկական տարբեր միջոցներով կատարված (մատիտ, ածուխ, պաստել, տուշ, ֆլոմաստեր) գրաֆիկական աշխատանքների բնորոշ գիծը նրանց կենդանությունն ու հուզական մթնոլորտն է: Առանց խախտելու իրերի բնական ձևերն ու առանց ճիգի, գյուղական տնակների ու ցանկապատերի քարաշարը հիշեցնող անպաճույճ, հստակ գծերի հյուսվածքով նկարիչը հասնում է զարմանալի արտահայտչականության: Ահա, օրինակ, «Ճամփորդը»: Հարազատ վայրերով յալոցը ինքը՝ նկարիչն է: Ամբողջ մարմնով լարված է նա, հուզախտով: Ներքին այս վիճակը արտահայտված է հայացքի, ուսերի, ձեռքերի ու հեցվածքի էքսպրեսիվ գծանկարի միջոցով: Հայրենի գյուղին նվիրված Մինասի բազմաթիվ գրաֆիկական գործերը, այդ թվում մորը պատկերող նկարների շարքը, հագեցած են անսահման սիրով ու կարոտի զգացումով.

Մինասը թատրոն մուտք գործեց միանգամից ու միանգամից արժանացավ լայն ճանաչման: Բեմի տարածքը նա տեսնում էր իբրև հսկայական կտավ, ուր տեղափոխում էր իր գունային աշխարհը: Սյուժեի ու երաժշտության ոգուց բխած սքանչելի բեմական կոմպոզիցիաներով ու գունա-լուսային ինքնատիպ «պատկերներ»-ով նա թարմ շունչ բերեց հայկական բեմանկարչությանը և մեծապես նպաստեց նրա զարգացմանը: Նկարչի ձևավորած ներկայացումներից Ռավելի «Բոլերո»ն, Է. Հովհաննիսյանի «Անտունի»ն, Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»ը ու այդ ասպարեզում նրա գլուխ-գործոցը հանդիսացող Ա. Խաչատրյանի «Գայանե»ն Երևանի օպերային թատրոնում առ այսօր շարունակում են հիացնել հանդիսականներին:

Մինասի ստեղծագործության սակավ հայտնի, բայց նշանակալի մի ճյուղը որմնանկարչությունն է: Լենինականի և Երևանի հասարակական վայրերում տեմպերայով կատարած նրա որմնանկարների ընդհանուր տարածությունը կազմում է հինգ հարյուր քառակուսի մետր: Հսկա պատերի վրա Մինասն աշխատում էր զարմանալի արագությամբ ու թեթևությամբ: Թերևս ոչ մի տեղ նրա արվեստի քնարականությունը այնքան թափանցիկ ու լուսավոր չէ, որքան այստեղ: Այդ գործերից ասես հնչում են Մինասի երջանիկ ու ամենախաղաղ օրերի ղողանջները: Որմնանկարների հիմնական թեման դարձյալ նկարչի մանկության հիշատակներն են: Ժողովրդի անցյալն ու ներկան պատկերված են այստեղ ձևի և բովանդակության միաձույլ ներդաշնակությամբ: Այնքան ջերմ ու հուզիչ է, օրինակ, «Հայաստան» որմնանկարի ազգային շնչով տոգորված գունային մթնոլորտը, որ թվում է թե երգ ես լսում, կոմիտասյան երգ...

Հայրենիքի ու նրա մշակույթի պատմության անբաժան մասը լինելու գիտակցությունը և հպարտությունը կրող Մինասը ապրեց նրա հարատևման ոգու խորհուրդը: Իբրև արվեստագետ, ի սկզբանե այդ խորհրդի ուրույն կերտիչն էր կոչված Մինասը: Եվ դա նրա երջանկությունն էր:

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայկական գյուղ 1974
Армянская деревня.

I. ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ. 1970, կտավ, յուղաներկ 45×65
ժամանակակից արվեստի թանգարան. Երևան

II. ՋԱՋՈՒՌ. 1960, կտավ, յուղաներկ 75×100
ժամանակակից արվեստի թանգարան. Երևան

III. ԼԱՎԱԾ ԵՆ ԹՈՌՈՒՄ. 1972, կտավ, յուղաներկ 165×165
ժամանակակից արվեստի թանգարան. Երևան

IV. ՎԱՐՊԵՏ ԳԵՎՈՐԳԸ. 1970, կտավ, յուղաներկ 125×100
Մ. Ավետիսյանի թանգարան. Ջաջուռ

V. ԿԻՆԸ ՃՐԱԳՈՎ. 1969, կտավ, յուղաներկ 120×140
Մ. Ավետիսյանի թանգարան. Ջաջուռ

VI. ՋՎԱՐԹ ԹԱՇՉՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ. 1973, կտավ, յուղաներկ 60×40
Լ. Թաշչյանի հավաքածու. Բոստոն

VII. ՇԵՄԻՆ. 1967, կտավ, յուղաներկ 150×150
ժամանակակից արվեստի թանգարան. Երևան

VIII. ՀԱՅԱՍՏԱՆ (որմնանկար). տեմպերա 500×600
Վահրամաբերդ գյուղի Մշակույթի տան ճեմասրահ

IX. ԿԱՄՈՒՐՋ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ. 1974, կտավ, յուղաներկ 80×80
Մասնավոր հավաքածու. Բելգիա

X. ՏՆԱԿ. 1974, կտավ, յուղաներկ 100×95
ժամանակակից արվեստի թանգարան. Երևան

XI. ԻՄ ԾՆՈՂՆԵՐԸ. 1962, կտավ, յուղաներկ 140×100
ժամանակակից արվեստի թանգարան. Երևան

XII. ԵՐԵԿՈՆ ԳՅՈՒՂՈՒՄ. 1974, կտավ, յուղաներկ 100×100
Մասնավոր հավաքածու. Երևան

XIII. ՍՊԱՍՈՒՄ. 1975, կտավ, յուղաներկ 150×110
ժամանակակից արվեստի թանգարան. Երևան

XIV. ԲՆԱՆԿԱՐ. ԼԵՆԻՆԱԿԱՆ. 1974, կտավ, յուղաներկ 70×70
Մասնավոր հավաքածու. Բելգիա

XV. ՀՐԵՇՏՈՒԹՅՈՒՆ. 1973, կտավ, յուղաներկ 100×120
Հայաստանի պետական պատկերասրահ. Երևան

Շապիկի վրա՝ ԳՅՈՒՂՈՒՄ. 1974, կտավ, յուղաներկ 120×100
Մասնավոր հավաքածու. Բելգիա

ԱՇՆԱՆԱՑԻՆ ԱԿՆԹԱՐԹ (հատված). 1972, կտավ, յուղաներկ 90×90
Ե. Խաչատրյանի հավաքածու. Երևան

IV

EREBOUNI

Printed in Finland by Yhteiskirjapaino Oy 1984

Минас—одна из высочайших вершин нашей современной живописи, видимая издали и открывающая новые дали.

А. АКОПЯН

Есть художники, чьи имена произносятся и будут произноситься с особой любовью. Это люди, созданные для искусства и без остатка посвятившие себя искусству. За недолгий срок, отпущенный им жизнью, они удивительным образом утверждают свое творческое «я» и оставляют поистине замечательное наследие. Именно таков Минас Аветисян.

Он ушел из жизни сорока семи лет. Окончил Ереванское художественное училище, а затем, в 1960-м, Ленинградскую академию художеств. За полтора десятилетия после этого он создал около пятисот больших и малых полотен, почти столько же рисунков, двадцать крупных фресок и оформил более десятка театральных постановок. За три года до его трагической смерти пожар, случившийся в мастерской, уничтожил все находившиеся там работы, в том числе свыше ста завершенных картин.

Минас родился и вырос на севере Армении, в горном ереване Джаджур. Неиссякаемым истоком его творчества оставались будни накрепко связанного с землей человека, древние традиции немудреной крестьянской жизни, непрестанно меняющиеся под солнцем краски окрестных гор и полей. Окончив академию, Минас вернулся на родину сложившимся оригинальным художником с несколькими десятками превосходных полотен.

Больше других радовался появлению Минаса его духовный отец, старейшина армянского искусства Мартирос Сарьян. «Подлинными моими последователями,— говорил он,— станут художники, чьи картины внешне не будут походить на мои работы». Не

Ս. Սարյանի հետ
С. М. Сарьяном

подражая Сарьяну, а обратившись к истокам, которые питали его творчество, Минас и сказал в отечественной живописи новое яркое слово.

Дружелюбный, доброжелательный, на редкость обаятельный человек, наделенный могучим и сильным талантом, Минас стал символом нового подъема нашего изобразительного искусства в 60-е годы.

Стихия Минаса — цвет, яркое, острое восприятие красок. На картине «Мои родители» печальным лицам и понурым фигурам стариков вторят охваченные таинственным безмолвием пустынные горы. Однако по своему настроению это полотно вовсе не тоскливо. Яркие массы синего, желтого и красного энергично воздействуют на зрителя. Обобщая образ людей земли и подчеркивая их неразрывную связь с природой, художник раскрывает здесь тем самым идею вечности.

Минас любил изображать мать на пороге родного дома. Всякий раз, когда он в студенческие годы уезжал после каникул в Ленинград, мать, стоя у дверей, долго провожала его взглядом. Сюжет картины «У порога» рожден живыми впечатлениями, но в сиюминутном сконцентрированно здесь непреходящее — извечный образ матери-крестьянки. Картина заставляет мысленно пережить дни войны, вспомнить о матерях, лишившихся сыновей. Воплощая эту тему через гармонию живых, поющих красок, художник преображает ее в полное поэзии лирическое сказание.

Так же прочитываются и пейзажи Минаса, составляющие значительную часть его живописного наследия.

Почти все работы художника можно объединить общим заголовком — «Моя деревня» или, вернее, «Мой мир». Минас любил и великолепно знал родной край и не случайно очень редко писал с натуры. Полностью полагаясь на свое внутреннее видение, он ставил перед собой одну задачу — достичь живописной образности. В удивительном разнообразии колорита и пластических форм виден поэт, вобравший в свою душу природу, которая словно для того и породила его, чтобы, глядя на себя его глазами, любоваться собою, своей новой, сотворенной Минасом красотой.

По своей живописной фактуре последние полотна художника наиболее богаты и насыщенны. Они напоминают поверхности опаленных солнцем скал и замшелые, словно заключившие в се-

бе загадку вечности хачкары, Минас много ездил по Армении, его вдохновляли памятники нашего древнего зодчества, во многом определяя его стремление по-новому, умудренно решать поверхность полотен.

Если в общем лирическом контексте творчества Минаса любовь к родине выступает как основное содержание, то главная его ценность определяется редкостным своеобразием, сколь неповторимо исключительным по своей сути, столь и традиционным. Корни его искусства берут начало в народном искусстве и средневековой армянской миниатюре.

Живопись Минаса — одно из выражений более всего присущего армянскому изобразительному искусству естественного, здорового, жизнелюбивого направления, которое зиждется на непосредственной связи человека и природы. К примеру, у Сарьяна цвет светоносен, подчинен солнечному свету и стремится выразить идею вечности. А у Минаса цвет обладает взволнованным, страстным, подчас трагическим звучанием. Этот драматизм подсознателен, он порожден тревогами и заботами человека наших дней, близко к сердцу принимающего все, что происходит в мире.

Минас по-новому оценил выразительные возможности и значение цвета и создал на своих полотнах сверхнапряженную атмосферу — в этом и заключается современность его языка, этим определяется его вклад в армянскую (и не только армянскую) живопись. Подобно глубокому потрясению, какое вызывает у человека штормовое море, воздействуют на нас картины Минаса с их взволнованной палитрой и могучим жизнеутверждающим духом.

Минас прежде всего живописец, но не менее успешно он выступал и в других жанрах изобразительного искусства. Его рисунки, выполненные в различной технике (карандаш, уголь, пастель, тушь, фломастер), привлекают жизненностью и эмоциональностью. Не искажая естественных форм предметов, легко, простейшими, как кладка деревенских каменных изгородей, средствами — переплетением четких незамысловатых линий — художник достигает удивительной выразительности. Вот, к примеру, рисунок «Путник». Его герой — сам художник, чья фигура напряжена и выдает душевное смятение. Это внутреннее состояние создано экспрессией взгляда и движения, множество графических работ Минаса.

Ճանապարհը. 1974
Путник.

посвященных родной деревне, в том числе серия рисунков с изображением матери, проникнута неподдельной любовью и грустью.

Придя в театр, Минас сразу же добился широкого признания. На сценическое пространство художник смотрел как на огромное полотно, куда он и переносил свой красочный мир. Своими великолепными сценическими композициями и оригинальными цвето-световыми «картинами», навеянными духом музыки и сюжетом, Минас внес свежую струю в армянскую театральную живопись и сыграл неоценимую роль в ее развитии. Оформление им спектакля «Болеро» Равеля, «Антуни» Э. Оганесяна, «Алмаст» Ал. Спендиарова и его высшее достижение в театре «Гаяне» А. Хачатуряна — и ныне вызывают восхищение.

Стенопись — малоизвестная, но значительная часть наследия Минаса. Общая площадь его фресок, выполненных темперой в общественных местах Еревана и Ленинакана, составляет пятьсот квадратных метров. Расписывая огромные стены, он работал очень быстро и без видимых усилий. Нигде, пожалуй, лиричность его искусства не проявлялась с такой пронзительной силой, как здесь. От этих работ веет дыханием самых тихих, самых счастливых его дней. Главная тема Минасовых фресок—воспоминания о детстве. Прошлое и настоящее народа изображены здесь с гармонической слитностью формы и содержания. Скажем, фреска «Армения» исполнена такой теплоты и взволнованности, ее цветовая атмосфера так проникнута национальным духом, что подле нее чудится, будто ты слушаешь песню, народную комитасовскую песню.

Минас с гордостью осознавал свою сопричастность к истории народа, свой вклад в его культуру. Как художник он был изначально призван по-своему воплотить духовную суть родной земли. И в этом его счастье.

ШАЭН ХАЧАТРЯН

I. АВТОПОРТРЕТ. 1970. Холст, масло 45×6[illegible]
Музей современного искусства Армении, Ереван

II. ДЖАДЖУР. 1960. Холст, масло 75×100
Музей современного искусства Армении, Ереван

III. ПЕКУТ ЛАВАШ. 1972. Холст, масло 165×165
Музей современного искусства Армении, Ереван

IV. КАМЕНЩИК ГЕВОРК. 1970. Холст, масло 125×100
Музей М. Аветисяна, Джаджур

V. ЖЕНЩИНА СО СВЕТИЛЬНИКОМ. 1969. Холст, масло 120×140
Музей М. Аветисяна, Джаджур

VI. ПОРТРЕТ ЭДАРТ ГАШЧЯН. 1973. Холст, масло 60×40
Собрание Э. Гашчяна, Бостон

VII. У ПОРОГА. 1967. Холст, масло 15[illegible]×150
Музей современного искусства Армении, Ереван

VIII. АРМЕНИЯ (фреска). 1973. темпера 500×800
Вестибюль Дома культуры села Ваграмаберд

IX. МОСТ В ЛЕНИНАКАНЕ. 1974. Холст, масло 80×80
Частное собрание, Бейрут

X. ДОМИК. 1974. Холст, масло 100×95
Музей современного искусства Армении, Ереван

XI. МОИ РОДИТЕЛИ. 1962. Холст, масло 140×100
Музей современного искусства Армении, Ереван

XII. ВЕЧЕР В ДЕРЕВНЕ. 1974. Холст, масло 100×100
Частное собрание, Ереван

XIII. ОЖИДАНИЕ. 1975. Холст, масло 150×110
Музей современного искусства Армении, Ереван

XIV. ПЕЙЗАЖ. ЛЕНИНАКАН. 1974. Холст, масло 70×70
Частное собрание, Бейрут

XV. [illegible]. 1973. Холст, масло 100×120
Гос. картинная галерея Армении, Ереван

На обложке:

В ДЕРЕВНЕ. 1974. Холст, масло 120×100
Частное собрание, Бейрут

ОСЕННЕЕ МГНОВЕНИЕ (фрагмент). 1972. Холст, масло 90×90
Собрание Ш. Ханатряна, Ереван

Մատենաշարի խմբագիր՝ Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Նկարիչ՝ Վ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ
«Էրեբունի» հրատարակչության տնօրեն՝ Վ. ԿԱՐԱԳԵՈՉՅԱՆ

Редактор серии Ш. Хачатрян
Художник В. Татевосян
Директор издательства «Эребуни» В. Карагезян

«Փոքրիկ հայ վարպետներ» շարքի տեքստերը տպագրված են Երևանի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատում (Երևան-9, Տերյան, 91)

Գունավոր վերարտադրությունների համար, որոնք տպվել են Ֆինլանդիայում իրն նվիրատվությունն, Մշակույթի հայկական ֆոնդը շնորհակալություն է հայտնում «Էրեբունի» հրատարակչությանը:

Тексты альбомов из серии «Армянские мастера кисти» напечатаны на Ереванском полиграфкомбинате им. Акопа Меграпарта (Ереван-9, ул. Теряна, 91).

За цветные репродукции, безвозмездно напечатанные в Финляндии, Армянский фонд культуры приносит благодарность издательству «Эребуни».

●

Հարգելի գնորդ, «Փոքրիկ հայ վարպետներ» շարքի ձեռք բերումով (յուրաքանչյուրի արժեքն է 2 ռուբլի). Դուք ձեր նպաստը կբերեք Մշակույթի հայկական ֆոնդի հայրենանվեր ձեռնարկումներին:

Уважаемый покупатель, приобретая альбомы из серии «Армянские мастера кисти» (каждый стоимостью по 2 рубля), Вы вносите свою лепту в патриотическую деятельность Армянского фонда культуры.

MASTERS OF ARMENIAN PAINTING

MINAS AVETISSIAN